# «ԿՐԱԿՈՑՆԵՐ ԿԵՆԴԱՆԻ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՎՐԱՅ»

Այս խորագրի ներքոյ Մայիսի 7ին «Կոմսոմոլսկայա պրաւդա» թերթը տպագրել է իր թղթակից Ս. Կուզմինի յօդուածը։ Նա նշում է, որ արդէն մէկ շաբաթ է, ինչ շարունակւում է «Օղակ» գործողութիւնը։ Հրասայլերը, դեսանտի ռազմական մեքենաները, ուղղաթիռները շրջապատել են հայկական երկու գիւղ. Մարտունաշէն գիւղն արդէն գոյութիւն չունի, Գետաշէնն այժմ վերածուել է արեան գետի։ Գործողութեան նպատակը, ինչպէս պնդում է Ադրբեջանի ՆԳ Նախարարութիւնը, գիւղերում ծպտուած զրոհայիններին յայտնաբերելն է։

Հրասայլերից ու զինուորներից յետոյ գիւղ են մտնում ՕՄՕՆականները՝ աւտոմատներով զինուած։ Սպանուած է 17 մարդ, կան տասնեակ վիրաւորներ։ Գործողութեան վիրաւորները պնդում են, որ առգրաւուած է մեծ քանակութեամբ զէնք, գերուած են զրոհայիններ։

Սակայն ո՞վ կարող է զրոհային համարել 82ամեայ անդամալոյծ ծերունուն, որին գնդակահարել են անկողնում,- իր տարակուսանքն է յայտնում թղթակիցը։

Ապա նա նկարագրում է գետաշէնցիներից մէկի այն գործողութիւնը, որի հետեւանքով 14 զինուոր պատանդ են վերցուել, եւ գնդապետ Մաշկովը ստիպուած է եղել նահանջի հրաման տալ։ Ներկայացուած է նաեւ պատանդների փոխանակութիւնը, զոհուածներին ու վիրաւորներին զրահամեքենաներով Շահումեան տեղափոխելը։